

ԴԱՍԱԿԻՔ ՓԱՄՓՈՒՇՏԸ

Posted on July 24, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Սամվել Խալաթյան, Երևան, 24 Հունիս 2021

Երբ «Գեղարդում» հրապարակվեց «Մեծ Հայրենադարձության» 75-ամյա տարելիցին նվիրված իմ հոդվածը, և դա ես արտագրեցի իմ դիմատետրի վրա, հեռաձայնեց ծանոթներիցս մեկը, հայտնեց իր զարմանքը, որ ես Կիրովականի (Վանաձորի) «Էվակոբագա» թաղամասում ապրող հայրենադարձ հասարակ արհեստավորներին լեզենդար (առասպելական) մարդիկ եմ անվանել: Չուր անցան իմ բացատրությունները, որ նրանցից ոմանք Սարդարապատի, Մուսալեռի հերոսամարտերում, ֆաշիստական Գերմանիայի դեմ իտալական, ֆրանսիական պարտիզանական ջոկատներում պայքարած մարդիկ էին, և որ նրանք իրենց կենցաղով ու նիստուկացով ևս յուրահատուկ էին ու լեզենդար (առասպելական): Չհամոզվեց: Ի՞նչ արած, թող նա իր կարծիքին մնա, իսկ ես որոշեցի իրական ու հիշարժան մի դրվագ պատմել, մանավանդ որ, հայ գեղարվեստական գրականության և լրագրության մեջ անչափ քիչ է գրվել խորհրդային Հայաստանում հայրենադարձ հայերի կյանքի մասին:

Այսու, թող ընթերցողը որոշի՝ լեզենդա՞ր էին նրանք, թե՞ ոչ:

Ցերեկով էլեկտրականություն չկար, ուշ երեկոյան էին միացնում, իսկ վաղ առավոտյան անջատում էին: Անցած դարի 55-60-ականներին էլեկտրականությունը կենցաղում օգտագործվում էր միայն տունը լուսավորելու և ով որ ռադիոընդունիչ ուներ՝ համերգ կամ ֆուտբոլի խաղերի ընթացքը լսելու համար: Կենցաղային այլ սարքեր չկային, արդուկը փայտածուխով էր տաքացվում, ճաշը եփում էինք օջախի կամ վառարանի վրա: Սառնարանի, փոշեծծիչի մասին լսած չկայինք:

Արևամուտի ժամերին, բակում ավելի լուսավոր էր լինում, քան տանը, և հարևանները դուրս էին գալիս, փոքր աթոռների վրա նստած զանազան պատմություններ էին պատմում կամ նարդի խաղում, մինչև որ մեկն ավետում էր՝ «Լույսերը տվին»:

Մի այդպիսի խաղաղ երեկոյի, ավագների քովը նստած, հետևում էի նարդու խաղին, երբ Գարեգինը վերհիշեց եղեռնի օրերի սարսափները.

- Գյուղի տուները այրեցին, կենդանի շունչ չթողին... Այդ տղան քուս բերեք,- ըսավ յուզբաշին: Ինձի մոտ տարին...

Խաչիկը, դիտմամբ, ընդհատեց նրան.

- Օր մը, Փարիզին մեջ կոշկակար Փանոսը հանդիպեցավ: Գարեգին, Փանոսը կհիշե՞ս:

- Այո, կհիշեմ...,- հպանցիկ պատասխանեց Գարեգինն ու շարունակեց իր խոսքը,- դուն որո՞ւն տղան ես,- հարցուց յուզբաշին: Արամի,- ըսի: Անո՞ր,- մատը տնկեց կախաղանը...

Խաչիկը դարձյալ ընդհատեց.

- Աս կոշկակար Փանոսը, կոշիկ նորոգելուն ատենը, կրունկին մեջ ոսկի գտած էր: Գարեգին, սա պատմությունը պետք է որ լսած ըլլաս:

- Լսած եմ, ջանքմ, թող տուր խոսքս շարունակեմ: Ան՞ր,- մատը տնկեց կախադանը: Ոչ,- ըսի և երեսս դարձուցի դեպի հայրս, որ սպանված քրոջս գրկած, ջախջախված գլխով ինկած էր...

Խաչիկը ընդոստ ոտքի կանգնեց.

- Բա՛-վա՛-կա՛ն է, մա՛րդ: Ուրիշ պատմություն չունի՞ս: Ես դիտմամբ խոսքը կփոխեմ, դուն դարձյալ նախճիրը կպատմես:

-Է՞, ես իմ պատմությունս կհիշեմ,- արդարացավ Գարեգինը:

- Ատ չէ քո պատմությունը: Այսքան շո՞ւտ մոռցար: Դուն հայդուկ Գարեգինը չե՞ս, ինչո՞ւ կմոռնաս և կհիշես միայն պարտությունդ:

Գարեգինը զգուշավոր չորս կողմը նայեց, ապա կիսածայն քրթմնջաց.

- Խենթեցա՞ր: Կագեբե՞ն կարոտեցիր:

- Ամենևին: Դուն ինչո՞ւ կվախնաս, Գրգո՛: Մուսալեռի կռվին թուրքը չկրցավ Գրգոյին սպանել, դուն ինչո՞ւ կթաղես քեզի:

- Դուն չվախցար, և կյանքիդ կեսը Սիբիրը կերավ... Մոռցա՞ր:

- Ո՛չ: Սիբիրն ալ չեմ մոռցած, կագեբեն ալ չեմ մոռցած, թոնիրի մեջ նետված մայրիկիս ալ չեմ մոռցած: Բայց ամենեն շատ կուզեմ Սարդարապատը հիշել և կհիշե՛մ: Մեր հաղթանակը կհիշեմ:

- Հայի բախտ է՛,-մտախոհ ասաց դսեղցի Հայկազը,- Հաղթում ենք, հաղթո՞ւմ, երկիրն ուրիշի ենք տալիս:

-Հայու բախտ չէ: Հայու կարճ հիշողություն է: Կհաղթե ու կկարծե, թե թշնամին այլևս իր բարեկամը դարձավ, կմոռնա, որ թշնամի ունի: Չենքը մեկ կողմ կնետե, հող կվարե, եկեղեցի կկառուցե...

Կարսեցի Բալաբեկը հակադարձեց.

- Քեզի չեմ հասկնա, Խաչիկ ախպեր: Հըբը ի՞նչ էներ հայը: Ո՞ր մե ազգը պատերազմից հետո իր հողը չի մշակե՞, քանդվածը չի սարքե՞:

- Այո: Բայց զենքը միշտ պատրաստ պիտի պահե: Չորեդ պիտի մնա: Չավակներուն իր հաղթանակը պիտի պատմե, անոնց իր հաղթանակն ու հաղթանակի ոգին պիտի կտակե և ո՛չ թե պարտություններու ողբը:

- Վերջ տուր, բե՛,- բարկացավ Գարեգինը, ես հաղթանակները չեմ մոռցած,- ապա հանելով պիջակը՝ մեկնեց Հայկազին- քանդե՛, աստառը քանդե, և կտեսնաք, որ չեմ մոռցած:

Հայկազը պիջակի աստառից փոքրիկ կապուկ հանեց:

- Ես ի՞նչ է:

- Փամփո՛ւշտ: Մուսալեռեն մնաց,- պարծեցավ Գարեգինը և կապուկից փամփուլտը հանելով մեկնեց ինձ,- վերցուր, տղաս, ասոր հերթը դեռ գալու է:

- Ո՛չ... ,- ընդվզեց Խաչիկը,- Ո՛չ: Ետ վերցուր, Գարեգին, ե՛տ: Դուև սա փամփուլտն ինչո՞ւ ետ բերիր... Ինչո՞ւ բերիր և ո՞ւր կուղարկես: Հին փամփուլտով նոր հաղթանակ չըլլար, Գրգո՛:

- Աս մարդը ի՞նչ կխոսի, չեմ հասկնար,- ուսերը թոթվեց Գարեգինը:

- Ամեն փամփուլտ զորավոր է ի՛ր կռվին մեջ: Ինչո՞ւ չկրցար սա փամփուլտը պարպել, Գրգո՛:

- Չե՞ս գիտեր, ֆրանսիացիները եկան...

- Եվ չորս հազար մուսալեռոցի նավերն առին, փախցուցին, այնպես չէ՞:

- Այո...

- Մենք, Սարդարապատին, ձեռնամարտի նետվեցանք, որովհետև փամփուլտ չունեինք, Գրգո՛: Դուև սա փամփուլտն ինչո՞ւ չպարպեցիր:

- Ի՞նչ ընեմ... Մեկ կո՞ղմ նետեմ,- շվարեց Գարեգինը:

- Թշնամուև հաղթելը սխրագործություն է, տղա՛ք: Սակայն հաղթելը քիչ է, հաղթանակը պահպանել է պետք: Հզո՛րը կրնա պահպանել իր հաղթանակը: Գրգո՛, անուշիկ եղբայր, մի՛ նեղվե: Ետ վերցուր փամփուլտը: Ան դասավիթ է: Քո չպարպած փամփուլտը դասավիթ է՛...

Լռություն տիրեց:

- Լույսերը տվին,- ասաց ինչ որ մեկը, բայց ոչ ոք չբարձրացավ տեղից: Բոլորը գլխահակ մտորում էին:

Գարեգինը վեր ելավ, ծանր քայլերով մոտեցավ բակը երիզող ցանկապատին, վերցրեց հենված բահն ու անցնելով ցանկապատը, փոքրիկ բանջարանոցի անկյունում սկսեց փոս փորել: Քիչ անց նա ետ եկավ, վերցրեց աթոռակին դրված փամփուլտը, վերադարձավ փոսի մոտ, ամփոփեց այնտեղ և հողը բլրեց վրան: Փոքրիկ գերեզման առաջացավ՝ առանց շիրմաքարի ու խաչի:

- Հիմա կուգամ,-ասաց Բալաբեկն ու տուն մտավ:

Գարեգինը ետ եկավ, հագավ պիջակը, նստեց իր աթոռին, անվրդով տեսք ընդունեց, կարծես անսովոր ոչինչ տեղի չէր ունեցել:

Բալաբեկը դուրս ելավ տանից՝ ձեռքին մի շիշ օղի, իսկ նրա կինը՝ Վարդանուշը, ամուսնու ետևից շտապեց բերել սկուտեղի վրա դրված բաժակներ, հաց, պանիր, կանաչեղեն:

Բաժակները լցրեցին: Բալաբեկը վերցրեց դրանցից մեկը, ոտքի ելավ.

- Թող հողը ծանր էղնի էդ փամփուշտի վրա, ծիլ չտա, անժառանգ մնա: Կենացդ, ֆիդայի Գրգո՛, հաղթանակներուդ կենացը...

Comments



Aha - 2021-07-27 22:07:02

Touching humane story, we need more of these, keep them coming.